«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Ներառական կրթության մարտահրավերները օտար լեզուների դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ - Ֆրանսերեն

ՀԵՂԻՆԱԿ - Սաթենիկ Ավետիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի Մ. Մաշտոցի անվան 1 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն……3

Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում…….5

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար…….8

Ներառումն ու օտար լեզվի ուսուցումը միևնույն հարթակում……..10

Մարտահրավերներն ու լուծման ուղիները……12

Եզրակացություն……..17

Օգտագործված գրականության ցանկ……..19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների զարգացմանն ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը: Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածությանը : Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Սակայն պետք է փաստել այն, որ ներառական կրթությունը ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Այսօր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շատ կարծրատիպեր կոտրվել են, սակայն երբ մարդիկ պետք է իրենց խոսքը գործով ապացուցեն այդտեղ նկատվում է որոշակի բաց: Շատերն են ասում, որ հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, սովորի դպրոցում, բայց դեմ են, որ իրենց երեխայի հետ սովորի նույն դասարանում: Նման գաղափարի տեր ծնողները իրենց երեխաներին առանձնացնում են հաշմանդամություն ունեցող երեխաներից և ցույց տալիս իրենց խտրական վերաբերմունքը: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքներն, ինչպես մյուսները: Հատուկ պայմանների կարիքներ ունեցող են համարվում այն դպրոցական երեխաները, ովքեր ունեն երկարատև խնամքի, բուժման, վերականգնման կարիք, որոնք պահանջում են լիարժեք, բազմակողմանի և ծրագրային մոտեցում: Հատուկ կարիքներով երեխաները նրանք են, ովքեր ունեն հոգեբանական, ֆիզիկական, մտավոր կամ վարքային խնդիրներ: Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում: Հայաստանում ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի: Եվ հենց այդ խնդիրներն են աշխատանքի թեման դարձնում ավելի ակտուալ: Կան մի շարք բացթողումներ ինչպես

նախադպրոցական, այնպես էլ դպրոցական ներառական կրթության համակարգում և դա նպաստում է աշխատանքի մեջ լինել նպատակային և համակարգված:

Սույն հետազոտական աշխատանքի *նպատակն է՝*

- Զարգացնել ուսուցիչների «կաղապարված մտածելակերպը»՝ շեշտադրելով հանդուրժողականությունն ու պատրաստակամությունը:
- Կատարելագործել համագործակցային մեթոդը՝ ապահովելով ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողի և ուսուցիչների կապը:
- Բարձրացնել ԿԱՊԿՈՒ սովորողների ներգրավվածությունը օտար լեզվի դասերին:

Խնդիրներն են՝

- Ուսումնասիրել ներառական կրթությունն, որպես այդպիսին, ուժեղ և թույլ կողմերը:
- Բացահայտել ծառացած մարտահրավերներն ու դժվարությունները:
- Գնահատել ներկայիս իրավիճակն ու առաջարկել քայլեր ոլորտի բարելավման համար՝ մասնավորապես օտար լեզվի դասերին:

Ներառական կրթության համակարգը ՀՀ-ում

1990-ականներից ի վեր կրթական ծառայությունների հասանելիության խնդիրը հանդիսանում է միջազգային հանրության քննարկումների թիրախ, երբ ընդունվեցին երեխաների իրավունքների 20 պաշտպանության ոլորտներում երկու կարևորագույն փաստաթղթեր՝ «Երեխաների իրավունքների կոնվենցիան» և «կրթություն բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը: Ներառական կրթության (ՆԿ) հիմնադրույթն ու գաղափարական սկզբունքների մշակումը տեղի է ունեցել 4 տարի անց՝ 1994թ.-ին Սալամանկայում ստորագրված համանուն հռչակագրի շրջանակներում, որը վերահաստատվել է 2000թ.-ին Սենեգալում՝ կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում: Սալամանկայի հռչակագրով և գործողությունների շրջանակով ամրագրվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, երիտասարդների և տարեցների համար կրթության կազմակերպումը: Մասնավորապես, հռչակագրի համաձայն յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ և կրթության հիմնարար իրավունք: Կրթական համակարգերը պետք է մշակվեն և կրթական ծրագրերը իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունների լայն բազմազանությանը: Սովորական դպրոցներում պետք է կարողանան սովորել կրթության առանձնագատուկ պայմանների կարիք ունեցող անձիք: Ներառական կրթության հայեցակարգային հիմքերի և միջազգային օրենսդրական ակտերի հետագա զարգացման մեջ նշանակալի ներդրում ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1996-ին ընդունված ՝ «կրթության մեջ խտրականությունների դեմ կոնվենցիան»: Հետագայում՝ 2005թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն շրջանառության մեջ դրեց երկու կարևորագույն հասկացությունների սահմանումները՝ «ներառում» և «ներառական կրթություն»: «Ներառումը» սահմանվեց իբրև բոլոր սովորողների կարիքների հասցեագրմանն ուղղված գործընթաց, որը տեղի է ունենում ուսման, մշակույթի և համայնքներում մասնակցությունը բարձրացնելու և կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը նվազեցնելու միջոցով: ՆԿ-ը բնութագրվում է վեց առանձնահատկություններով. . կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա 2. կրթական գործընթացը պետք է

կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը, 3. դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական պլաններ, որոնք կբալանսավորեն միասնականությունը և յուրահատկությունը, 4. դպրոցը պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար, 5. ՆԿ-ը ենթադրում է կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, 6. ՆԿ-ը ենթադրում է աջակից կառույցների և ռեսուրսների ստեղծում՝ ուսուցչական, ադմինիստրատիվ անձնակազմի, աշակերտների և ծնողների և ՆԿ համակարգի այլ շահառուների համար 2008թ.-ին Ժնևում կայացած Կրթության միջազգային կոնֆերանսի 48-րդ համաժողովի շրջանակներում քննարկվեցին մի շարք առանցքային դրույթներ, որոնք կարևոր են ՆԿ հայեցակարգային հիմքերի զարգացման և ՆԿ քաղաքականությունների մշակման և ներդրման համար: Խոսքը գնում է, մասնավորապես «ՆԿ», «կրթություն բոլորի համար» և «կրթության մեջ ինտեգրում» հասկացությունների մասին, որոնք հաճախ նույնացվում են, սակայն բովանդակում են սկզբունքորեն տարբեր նպատակներ և խնդիրներ: «Կրթությունը բոլորի համար» հայեցակարգը չպետք է նույնացվի «ՆԿ» հայեցակարգի հետ: Թեև երկուսն էլ ուղղված են կրթության հասանելիության բարձրացմանը, այդուհանդերձ ՆԿ-ը նպատակ ունի ապահովելու որակյալ կրթություն՝ խտրականության ցանկացած ձևի բացառման միջոցով: ՆԿ-ն ավելի է, քան մասնակցությունը և հասանելիությունը: Այն կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով: ՆԿ-ն ավելին է քան մասնագիտությունն ու հասանելիությունը։ Այն կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը՝ որակյալ կրթություն տրամադրելու միջոցով։ 7 ՆԿ-ը չպետք է նույնացվի նաև ինտեգրում հասկացության հետ: Ինտեգրումն ապահովում է ԿԱՊԿՈՒ անձանց մասնակցությունը կրթական գործընթացներում, իսկ ներառումը ամրագրում է որակյալ կրթություն ստանալու բոլորի իրավունքը: Ավելին, ինտեգրման դեպքում աշակերտները իրենք պետք է հարմարվեն առկա դպրոցական համակարգին (առարկայական պլաններին, դասավանդման մեթոդներին,

արժեքներին և այլն): Այս դեպքում դպրոցները փորձում են ապահովել անհատական ծրագրեր, տարբերակված մեթոդներ, հատուկ մանկավարժներ, որոնք էլ ավելի են ընդգծում տվյալ երեխայի ԿԱՊԿՈՒ կարգավիճակը և նրան առանձնացնում մյուսներից: Օրենքի համաձայն ԿԱՊԿՈՒ անձանց կրթությունը կարող է իրականացվել պետական և ոչ պետական հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով: Օրենքը մանրամասն չի ամրագրում, թե որոնք են կրթության առանձնահատուկ պայմանները, որոնց պետք է համապատասխանի ՆԴ-ը: Փոխարենը, սույն օրենքն ամրագրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման գործընթացը, վկայագրումը, ՆԿ կազմակերպման տնտեսական հիմքերը, միջազգային կառույցների հետ համագործակցությունը և այլն:

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց

համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից։ Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին։ Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին։ Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար։ Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը։ Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում։ Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները։ Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը։ Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար։ Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով։ Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը)։

Ներառումն ու օտար լեզվի ուսուցումը միևնույն հարթակում:

Մեթոդաբանություն

ԿԱՊԿՈ երեխաները նույնպես պետք է սովորեն օար լեզու , բացի մյուս դասերից: Ուսուցիչները պետք է համապատասխան դասի պլան կազմեն նրանց համար: Դասի պլանը պետք է պլանավորվի որոշ չափանիշների հիման վրա.

ա) պետք է մշակվի ֆրանսերենի դասավանդման ժամանակ կիրառվող մեթոդաբանությունը, որը հարմար է ԿԱՊԿՈՒ երեխաների համար

բ) ուսումնական նյութը պետք է լինի գրավիչ և համապատասխան

գ) ուսուցիչը պետք է լրացուցիչ աշխատաժամանակ ծրագրի երեխայի համար

դ) ուսումնական ծրագիրը պետք է հարմարեցվի ԿԱՊԿՈՒ սովորողների համար (մասնավորապես. պետք է բացառել ամբողջ ուսումնական պլանը ծածկելու ճնշումը և

պետք է կենտրոնանալ մի քանի հմտությունների զարգացման վրա)

ե) ուսուցիչը ներառական կրթության մասնագետի հետ միասին պետք է կազմի անհատական ուսումնական պլան: Դասը պետք է լինի շատ ինտերակտիվ, պետք է շեշտը դնել երգելու, խաղալու, պարելու, նկարելու վրա:

Շարժողական գործողությունները օգտակար են ԿԱՊԿՈՒ երեխաների համար, քանի որ իրենց համար դժվար է կենտրոնանալ կամ նստել: Մթնոլորտը նույնպես պետք է հաճելի լինի սովորողի համար, որպեսզի հնարավոր լինի խուսափել անհարմար զգալուց, ճնշման տակ լինելուց, սթրեսային իրավիճակներից կամ ձանձրալի գործունեություններից. Վերացական հասկացությունները, կանոնները, քերականական կանոնները հոգնեցուցիչ են. պետք է խուսափել, նմանատիպ ընթացակարգերից, քանի որ դրանք լարվածություն են առաջացնում: Ավելի լավ է խուսափել սխալները շատ հաճախ ուղղելուց, քանի որ դա կարող է դեմոտիվացնել սովորողներին: Օտար լեզուն սովորում են ուղիղ ճանապարհով՝ դրա հետ շփմամբ, հետևաբար ԿԱՊԿՈՒ սովորողները պետք է ծանոթ լինեն անգլերենով լսելու և կարդալու գործողություններին: Ուսուցման տարբեր ոճեր կան նույնիսկ առողջների համար: Այս պատճառով, նպատակահարմար է, որ ուսուցիչները լինեն ծանոթ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման ոճերին: *Կինեստետիկ* սովորողները նախընտրում

են շարժումներ սովորելիս, *տեսողական* սովորողները նախընտրում են կարդալ և նկարներ, *միջանձնային* սովորողները սիրում են խմբային աշխատանքը և դասարանային քննարկումները, մինչդեռ *ներանձնային* սովորողները նախընտրում են աշխատել անհատական:

Փաստորեն, ուսուցիչները դասավանդման ընթացքում որոշակի խնդիրների հայտնաբերման գործընթացի մասնակից են դառնում: Հետևաբար, այս ուսումնասիրությունն անդրադառնում է ֆրանսերենի ուսուցման մարտահրավերների վրա՝ հատուկ կարիքներով սովորողների դեպքում. Այն ուսումնասիրում է այն մարտահրավերները, որոնց բախվում են ուսուցիչները, ովքեր ուսուցանում են ԿԱՊԿՈՒ երեխաներին: Ուսուցիչները պնդում են, որ օտար լեզվի դասավանդումը ներառական դասարանում այդպես իսկապես արդյունավետ չէ: Նրանք կարծում են, որ սովորողները երբեմն տուժում են ԿԱՊԿՈՒ սովորողների ոչ կարգապահություններից. Նրանք դժվարությամբ են հասկանում հասկացությունները: Այսպիսով, ուսումնական ծրագիրն ամբողջությամբ չի ստացվում: Մյուս կողմից, որոշ սովորողների հետ ԿԱՊԿՈՒ սովորողները դեմոտիվացիայի է ենթարկվում. Նրանք կորցնում են իրենց ինքնավստահությունը: Դա այն պատճառով է լինում նաև, որ նրանք խտրականության են ենթարկվում. Այսպիսով, դա առաջացնում է ցածր ինքնագնահատական և միայնակության զգացում (Բուլոք, 1992): Այս բացասական փոխազդեցությունները կարող են առաջացնել «պակաս բարենպաստ դպրոցի մասին պատկերացումները, դպրոցից խուսափելու ավելի բարձր մակարդակները և ավելի ցածր մակարդակները դպրոցական ներկայացում»

Մարտահրավերներն ու լուծման ուղիները

Համընդհանուր ներառական կրթության ներդրումը իր հետ բերում է հետևյալ **մարտահրավերները՝**

-Մասնագետների փորձառության պակաս

-առարկայական ուսուցիչների դասավանդման մեջ ներառական մոտեցումների, մեթոդների պակաս

-տնօրինության կողմից դպրոցներում ներառման գործընթացի արդյունավետ կազմակերպում

-ներառականության գաղափարի սխալ ընկալում

-ֆիզիկական միջավայրի ոչ համարժեք պայմաններ:

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից 2013թ. առաջին վեց ամսվա ընթացքում ՀՀ-ի 5 թիրախային մարզերում գործող ընտրանքային 34 ներառական դպրոցներում կատարվել է ներառական կրթության գնահատում, պարզելու համար, թե որքանով է Հայաստանը պատրաստ անցում կատարելու ներառական կրթության: Գնահատման արդյունքում եկել են եզրահանգման , որ ՀՀ-ում ներառական կրթության մոդելն իր բոլոր գործառույթներով նման է ինտերված ուսուցման: Գնահատող թիմը եկել է այն եզրակացությանը, որ արդյունքներն այդքան էլ գոհացուցիչ չեն և այդ կերպ ՀՀ-ը համընդհանուր ներառական կրթության պատրաստ չէ: Սակայն, ցավոք, այս գնահատման ժամանակ անտեսվել է ներառական կրթության անցման հոգեբանական գործոնը: Մասնավորապես՝ 2019 թ. Սեպտեմբերից ՀՀ ԿԳՄՍ նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ <<Դասավանդի'ր Հայաստան>> կրթական հիմնադրամը իրականացրեց << Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացման ծրագիրը: Արդյունքում ընտրված 60 մենթորներից իրականացրին վերապատրաստումներ և մենթորական աջակցություն Երևանում, Արագածոտնի և

Շիրակի մարզերում: Այսօր արդեն մեկնարկել է երկրորդ փուլը: Մյուս մարզերում վերապատրաստումներ են իրականացնում Մանկավարժական հոգեբանական աջակցության կենտրոնները: Վերապարասողների և մենթորների խումբը աշխատում են ուսուցիչների հետ՝ սովորեցնելով համընդհանուր ներառմանը վերաբերող մի շարք հարցեր՝ սկսած ԿԱՊԿՈՒ երեխայի կարիքի գնահատումից, մինչև նրա աշխատանքի մեթոդներն ու ռազմավարությունները: Այսինքն՝ ուսուցիչներին համապասխան գործիքներով զինելու գործընթացն ընթացքի մեջ է և Հայաստանը փուլ առ փուլ անցում է կատարում համընդհանուր ներառական կրթության ծրագրի իրագործմանը: Սակայն, ԿԱՊԿՈՒ երեխային հատուկ դպրոցից հանրակրթական դպրոցներ ՝ նոր բարենպաստ կրթական միջավայր տեղափոխելուց և ուսուցիչներից համապատասխան մեթոդաբանությունից պակաս կարևոր չէ հանրակրթական դպրոցներում սովորողների, նրանց ծնողների, և ընդհանրապես հասարակության դիրքորոշումն այս հարցում, որն էլ, անշուշտ,իր անմիջական ազդեցությունն ունի գործընթացի հաջող կամ անհաջող իրականացման գործում: Այսինքն՝ ինչ է ստացվում՝ ներառական կրթությունը դիտարկվում է որպես միայն մասնագիտական խնդիր, և դրան վերաբերող նախապատրաստական բոլոր աշխաանքները, քննարկումներն իրականացվում են բացառապես նեղ մասնագետների շրջանում: Այսինքն՝ անտեսվում են ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների և նրանց ծնողների կարծիքները: Այլ կերպ ասած անտեսվում է տիրույթը ՝ սկսած համայնքից, վերջացրած դպրոցի բոլոր աշխատակիցներով , ոչ ԿԱՊԿՈՒ երեխաներով ու նրանց ծնողներով: Միջավայրը , անշուշտ, կարող է նպաստել ներառական կրթության քաղաքականության հաջող իրականացմանը: Միջազգային փորձը ցույց է տալիս , որ եթե նախապատրաստական աշխատանքներ չտարվեն աշակերտների ծնողների հետ, դա կարող է խոչընդոտել ներառմանը և խանգարել հետագա բնականոն աշխաանքներին:

Ներառական կրթության պրոֆեսոր Մարա Սապոն-Շեվինը ուսուչիներին խնդրել է դասերի ժամանակ օգտագործել գրքեր, որոնք գրված են եղել ԿԱՊԿՈՒ երեխաների մասին, որպեսզի կրթեն ոչ ԿԱՊԿՈՒ երեխաներին, ձևավորելով համապասխան վերաբերմունք իրենց համադասարանցիների հանդեպ: Առաջարկի նպատակներից են նաև եղել նվազեցնել նախապաշարմունքները ԿԱՊԿՈՒ երեխաների մասին և

թույլատրել հաշմանդամություն ունեցող երեխաներին մուտք գործել դպրոց, որպես կրթության լիիրավ անդամներ: Սակայն Սապոն-Շեվինի առաջարկությունը լայն ուշադրության չի արժանացել: Ներառական կրթության խնդիրը հուզել է այդ ոլորտի այլ մասնագեների և էքսպերտներ Մոնսոնը և Շարթլեֆը 1979 թվականին հետազոտություն են կատարել ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում, պարզելու համար , թե ինչ ազդեցություն են ունենում վերջիններիս իրազեկվածությունը ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ դիրքորոշման փոփոխության վրա: Մասնագետների հետ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաները դիտել են ֆիլն քառակի ֆոկոմելիա (վերջույթների թերզարգացվածություն, երբ չորս վերջույթները բացակայում են) ունեցող երեխաների վերաբերյալ, այնուհետև ունեցել են լսարանային քննարկում մասնագետների հետ: Արդյունքում ոչ ԿԱՊԿՈՒ ավելի մեծ թվով երեխաներ են նշել, որ կցանկանան այդպիսի խնդիրներով ընկեր ունենալ, քան մինչև դիտումն ու քննարկումը: Արդյունքն ավելի զգալի է եղել այն դասարաններում, որտեղ ուսուցիչը ֆիզիկական արատներ ունեցող երեխաների խնդիրների մասին է խոսել: Այս փորձի արդյունքում պարզ է դառնում, որ անհրաժեշտ է նախ կազմել համապատասխան նյութեր, և մինչև ներառական կրթության անցնելը ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացնել ինֆորմացիոն և հոգեբանական նախապատրաստական աշխաանքներ:

Ուսումնասիրելով միջազգային փորձը հասկանալի է դառնում, որ նախքան ներառական կրթության անցնելը անհրաժեշտ է՝

1. Մասնագիտական թիմի կողմից, օգտագործելով տարբեր միջոցներ և ռեսուրսներ, իրազեկման և հոբեանական դասընթացներ անցկացնել

   -բոլոր համայքներում

   - ոչ միայն մանկավարժների, այլ նաև ողջ անձնակազմի շրջանում

   -ներառվող դասարանի ծնողների հետ՝ անհատապես

   -ոչ ԿԱՊԿՈՒ համադասարանցիների շրջանում

2. Այն համայքներում, որտեղ արդեն ներառական կրթություն իրականացվում է, կատարել հետազոտություններ և համապատասխան բարելավման միջոցառումներ:
3. Վերանայել կրթության բովանդակությունը, դասագրքերն ու ուսումնաօժանդակ նյութերը, որոնց միջոցով իրականացվում են գիտելիքների հաղորդումը, կարողությունների ու հմտությունների ձևավորումը, որն էլ հիմք է նախապատրաստում համապատասխան վերաբերմունքի ու վարքագծի դրսևորման համար:
4. Ռեսուրսներ / գրքեր , ֆիլմեր, բրոշյուրներ, տեսահոլովակներ տրամադրել դպրոցներին՝ լսարանի իրազեկվածության նախատրամադրվածության բարձրացման նպատակով:
5. Ռսուրսների պարտադիր օգտագործման և դրանց արդյունավետության մասին հաշվետվություններ պահանջել տնօրինություններից:

Ինչպե՞ս հաղթահարել ներառական կրթության մարտահրավերները: Ներառական կրթության իրականացման խնդիրները հաղթահարելու համար պետք է լավ համագործակցություն լինի կառավարության, համայնքների և շահագրգիռ մարմինների միջև, որպեսզի ըմբռնեն դեպի ներառական կրթություն տանող ճանապարհը: Ներառական կրթությունը առանց խտրականության ընդունում է բոլոր երեխաներին սովորական կամ հանրակրթական դպրոցներում: Ստորև ներկայացված են ներառական կրթության մարտահրավերների վերաբերյալ առաջարկվող միջոցառումները կամ լուծումները: 1. Հաշմանդամության հետ կապված ուսումնասիրություններ: Ներառական մշակույթ զարգացնելու համար անհրաժեշտ է վերացնել ներառական կրթության մասին թյուր կարծիքը: Եվ ներառականության մասին չհասկացվածության այս խոչընդոտը վերացնելու համար պետք է ջանքեր գործադրվեն՝ ներգրավելու հաշմանդամություն ունեցող անձանց ուսումնասիրություններն ու նման ուսումնասիրության կարևորությունը կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

Լիարժեք ներառման մոդել: Ինչպես վերը նշվեց, ուսուցիչների և ծնողների բացասական վերաբերմունքը հատուկ երեխաների նկատմամբ խոչընդոտ է հանդիսանում ներառականության իրականացման ճանապարհին: Ներառումը լիարժեք ներառման մոդելի տեսքով պետք է ընդունվի որպես բոլոր երեխաների կրթության լայն քաղաքականություն առանց որևէ տեսակի խտրականության: 3. Ուսուցիչների կրթություն Ներառական կրթության խոչընդոտները հաղթահարելու համար: Առաջնահերթությունը պետք է տրվի նախադպրոցական, ինչպես նաև ծառայողական ուսուցիչների կրթությանը, առարկայական ուսուցիչների և աշակերտների հետ կապված դպրոցի այլ անձնակազմի համար՝ նրանց անհրաժեշտ գիտելիքներով և վերաբերմունքով ներառական համակարգում աշխատելու համար: 4. Ներառման մշակույթի ձևավորում: Ներառական կրթության խոչընդոտները կամ մարտահրավերները վերացնելու համար շատ անհրաժեշտ է փոխել տարբեր կարիքներ ունեցող երեխաների շուրջ քարացած մարդկանց վերաբերմունքը: Սա փոխելու համար անհրաժեշտ է ստեղծել ներառական մշակույթ: Կան բազմաթիվ առաջարկական միջոցներ կամ լուծումներ ներառական կրթության մարտահրավերներին: Ինչպե՞ս կարելի է հաղթահարել ներառման խոչընդոտները. ստեղծելով լավ համագործակցություն, ներառական քաղաքականություն, բարելավելով տրանսպորտային համակարգը, ճկուն ուսումնական պլանը, ներառման իմպրովիզացված պլանը և այլն: Սրանք են օգնում լուծել ներառական կրթության իրականացման խնդիրները:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներառական կրթությունը կրթական այպիսի ծրագիր է, որն ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ներշնչում է պատկանելիության զգացում: Ստեղծում է ուրույն պայմաններ կրթական համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց համար: Պայմաններ է ստեղծում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց հասարակության մեջ ներգրավելու համար: Այսօրվա հրամայական պահանջն է, բոլոր բարեգործական և հասարակական կազմակերպությունները բարելավեն հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքն ու ստեղծեն հնարավորություններ նրանց լիարժեք կյանքի համար: Համապատասխան պետական քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա բարենպաստ սոցիալական մակարդակ ապահովել հասարակության այդ շերտի նկատմամբ: Ամփոփելով «Ներառական կրթության մարտահրավերները» թեման և կատարած դիտարկումների ու հետազոտության արդյունքները՝ կարող ենք ասել, որ ներառական կրթությունը մեր երկրում՝ մասնավորապես մարզային համայնքներում դեռևս կայացման փուլում է: Առաջատար մասնագետների կարիք դպրոցները շատ ունեն, իսկ դպրոցների մասնագետներն էլ ունեն վերապատրաստման կարիք: Այնուամենայնիվ, ներառական համակարգի գործունեության շնորհիվ՝ ներկա փուլում մի շարք հիմնախնդիրներ գտել և գտնում են իրենց լուծումները: Ինչևէ, դպրոցները պետք է կարողանան և պատրաստված լինեն այդ ծրագրերը իրականացնելու ապահովել պատշաճ պայմաններ, անձնակազմի կարողություններ, հմտություններ և վերաբերմունք: Դպրոցը այն վայրն է, որտեղ պետք է ձևավորվի ներառականության նոր մշակույթ: Քայլեր ձեռնարկվեն, դասեր և դասընթացներ կազմակերպվեն: Այս պարագայում ամենակարևորը պատշաճ միջավայրի ապահովելն է: Դպրոցում հավասար պայմաններ պետք է ապահովվի բոլոր սովորողների համար. ո՛չ արտոնյալներ պետք է լինեն և ո՛չ էլ անտեսվածներ: Յուրաքանչյուր հասարակություն ինքն է մշակում և իրագործում սեփական գաղափարները: Մեր երկրը այդ առումով դեռևս ճանապարհ ունի անցնելու Կրթությունը՝ լինելով

պետության կառուցման հենասյուներից մեկը, չի կարող անմասն մնալ այդ գործընթացներից։ Ներառական կրթությունը լուրջ մարտահրավերների առաջ է կանգնեցնում մեր կրթական համակարգը, դասական մոտեցումները, պետք է արդիականացնել այդ առումով ուսումնական հաստատությունների ինստիտուտը։ Ասել կուզեմ, որ կրթությունը որակյալ չի կարող համարվել և չի կարելի ասել. «մեր երկրում կրթությունը բոլորի համար է», եթե այդ կրթության կազմակերպման գործիքները, մեխանիզմները դեռևս ունեն բացառումներ երեխաների համար։ Այսինքն՝ ներառական կրթությունը իսկապես հնարավորություն է ոչ միայն բարելավելու մեր կրթական ոլորտը, այլ նաև մեր ողջ հասարակությունը։ Ներառական կրթությունը ավելին է, քան միայն դպրոցական կրթությունը։ Այն վաղվա հասարակության վերաբերմունքն ու մտածելակերպն է։ Հուսանք և լինենք համոզված, որ ապագայում մեր երկրի բոլոր դլրոցները կլինեն ներառական և այդ տերմինը՝ «ներառական» , իսպառ կվերանա, և չենք ասի.«այս աշակերտը ներառականից է, այն մեկը՝ ոչ...»: Կարող ենք հաստատ ասել, որ նրանք ևս ուզում են ընկալելի միջավայր, որտեղ աշխարհը զերծ կլինի պատնեշներից ու խտրականություններից։ Այսպիսով՝ սա մի գործընթաց է, որի շնորհիվ տարեցտարի պակասում են հասարակությունից օտարված երեխաները։ Սա գործընթաց է, որը պիտի Հասարակության վերաբերմունքի փոփոխության ճանապարհ անցնի։

Օգտագործված գրականության ցանկ

1.Ներառական կրթության իրականացման ուղեցույց /Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար/, Երևան, 2008թ,

2.ՀՀ օրենքը <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց

կրթության մասին>>, 2005թ

3.Երեխաների իրավունքների կոնվենցիան 1989 https://www.arlis.am/documenview.aspxlD=60503

4. Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը https://unesdoc.or/ark:/48223pf0000127583_eng

5. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, կրթական հետազոտությունների և խորհրտատվությունների կենտրոն, 2013 https://bit.ly/3e1F1XS

6. Է. Բրայեն, Լավիթ Մ.Լ.Ա. Ավագյան, Վ. Եսայան և ուրիշներ , ներառակն կրթության ռազմավարություններ, Դասագիրք, 2019

7.Bricker, D. (1995). Le défi de l'inclusion, Journal of Early Intervention, 19

8.Brophy, J. (1996) Enseigner aux étudiants à problèmes. New York : La Presse Guilford.

9.processus. Dans : R. Lerner (éd.) Manuel de psychologie de l'enfant, 5e éd., Vol 1 :

10.Méthodes Approches. New Delhi : SAGE Publications, Inc.

11.Enseignement inclusif et adaptatif : relever le défi de la diversité en classe » ; Pierre Westwood ; 2018

12.https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000374447_fre

13.https://www.cairn.info/psychologie-du-developpement--9782100824076.htm

14 . https://www.unicef.org/education/inclusive-educaion

15. <<Դասավանդի'ր Հայաստան>> կրթական հիմնադրամն իրականացնում է << Ուսուցիչների ՝ ներառող դասաանդման վերապարասման կարողությունների զարգացման>> ծրագիրը, 4/սեպտեմբեր /2019,

16. Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք, 2019